

Թիւին համար: Ձեր այդ սքանչելի դործը տեսնելէ յետոյ առաւելապէս կը ցաւիմ որ չկրցի ես ալ գէթ շատ պզտիկ մաս մը ունենալ անոր մէջ:

Անչափ երախտապարտ եմ Ձեզի, որ այսուհանդերձ Դուք բարի էիք եղած ինձ զրկելու օրինակի մը Գեղունի-էն: Սեղանի զարդ է իրապէս: Օտար բարեկամներս անգամ կը հիանան:

Կը մաղթեմ Ձեզ երկար կեանք եւ կատարեալ յաջողութիւն Ձեր այնքան հրմտութեամբ վարած դործը լաւագոյն կերպով առաջ տանելու համար:

Ռ. Դարբինեան

Խմբագրապետ «Հայրենիք»-ի

Պոսթոն, 21 Փետր. 1951

«Գեղունի»-ն հիանալի էր: Հպարտ եմ ըսելու որ Որբունի-ն մինչեւ հոս բերած եմ: Ինչ որ ձեռքէս կու գայ կ'ընեմ որ ամէն հայ ունենայ Գեղունի-ն, ամէն կերպով պարծանք է թէ՛ Ձեզի համար, եւ թէ՛ հայուն համար որ ունի Հաստատութիւն մը որ կրնայ արտադրել ասանկ դործեր:

Վահան Յ. Ալքունեան

Փաղէտանա, 25 Յունուար 1951

Ստացած եմ բացառիկ «Գեղունի»-ն որ բացառիկ գեղեցկութիւն մ'ունի: Թոյլ տրէ՛ք որ շնորհաւորեմ Ձեզ ու «Գեղունի»-ի խմբագրութիւնը այս հիանալի հրատարակութեան առթիւ, որ պատիւ կը բերէ թէ՛ բազմապատկառ Միաբանութեանդ եւ թէ՛ անոր մայր հայ ազգին: Սեղանիս վրան է ան, եւ քովս եկող հայ թէ օտարներուն հպարտանքով կը ցուցնեմ դայն: Յուցուցի ի մէջ այլոց ներքին Գործոց Նախարարին, որ բարեկամս է ու հայասէր (այնքան հայասէր որ իր որդւոյն ամուսնութեան առթիւ ուզեց որ եկեղեցին մի միայն հայերէն շարականներ երգուին): Ինքն ալ կը շնորհաւորէ «Գեղունի»-ն:

Տոնթէվիտոյ, 28 Փետր. 1951

Մոնթէվիտոյ, 28 Փետր. 1951

«Գեղունի»-ի սքանչելի հատորը ստացայ մեծ ուրախութեամբ եւ հպարտութեամբ ցոյց կու տամ իմ խաղաղի բարեկամներուն իրենց հիացումը դրաւելով:

Թարգման ըլլալով նաեւ ծնողացս երախտաբեր զգացմանց, կը մաղթեմ անմար փայլ այս հսկայ դործին, որ կարենայ կանոնաւոր կերպով լոյս տեսնել միշտ աւելի լաւ, միշտ աւելի մեծ:

Տոնթ. Տիգրան Դահնագարեան

Լոնիկոյ, 8 Մարտ 1951

Ժամանակին ստացած էի Ձեր զրկած 1950-ի «Գեղունի»-ն որ ինձի հիացում եւ զարմանք պատճառած էր. այնքան որ փափաքած էի ճիշտ այդ շրջանին քաղաքիս մէջ կազմակերպուած գիրքերու միջազգային ցուցահանդէսին ներկայացնել մեր վանքին այս հոյակապ դործը:

Տոնթ. Յակոբ Թաշնեան

Թորին, 21 Մարտ 1951

Պատիւն ու հաճոյքը ունեցայ ստանալու բարեյիշատակ Միւթար Աբրահամ մահուան երկհարիւրամեակին նուիրուած Գեղունի-ի օրինակը, զոր ազնիւ փափկանկատութեամբ մը հաճած էիք զրկել իմ հասցէիս:

Արդարեւ գեղարուեստական հոյակապ հրատարակութիւն մըն է ան, մեծ հոգածութեամբ, ձեռնհասութեամբ եւ ամենանուրբ ճաշակով պատրաստուած, եւ փառաւոր Յուշարձան մը՝ Միաբանութեանդ բազմերախտ Հիմնադրին անուան իսկապէս արժանի:

Իմ ջերմ շնորհաւորութիւններս յայտնելով Պատ. Խմբագրութեանդ կատարած այս ճշգրտ աշխատանքին համար, սրտազին շնորհակալութիւններս կը ներկայացնեմ ինձի նուիրուած Գեղունի-ին առթիւ եւ Միաբանութեանդ ազգանուէր ջանքերուն կը մաղթեմ նորանոր յաջողութիւններ:

Ա. Գարակէօգեան

Նիւ Եորք, 5 Ապրիլ 1951



ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

Հ. ԹԵՂՈՂՈՐ Վ. ՍԻՐՈՒՆԵԱՆ

(1879-1951)



Տարւոյս Փետրուար 22-ին իր մահկանացուն կնքեց Միաբանութեանս վաստակաւոր երէց անդամներէն Հ. Թեղղոր Վ. Սիրունեան՝ սուգի մատնելով զամէնքը իր յեղակարծ մահով:

Ծնած Արարիկի 1879-ի 5 Օգոստոսին՝ 15 տարեկանին կը թողուր հայրենի տունը եւ կու գար Ս. Ղազար (25 Սեպտ. 1894) Միւթար արբահօր դաւաններուն մէջ զինուորելու կրօնաւորական եւ քահանայական սուրբ կոչումով՝ իրեն ընկերակից ունենալով իր հայրենակից եւ ազգական

պատանի մը՝ այսօր Ուխտիս անդամ Հ. Արեքսիս Վ. Յովսէփեան:

Հանգուցեալը մկրտութեան սուրբ աւագանէն կոչուած Յակոբ՝ իր վանական սրբեմին հետ (1897) կ'ընտրէր Թեղղոր անունը. ինք դաւանէր իր ծանօթ Կէօղիւպէօ-յիւքեան ընտանիքին, յետոյ շնորհալիօրէն հայացուցած Սիրունեան ձեւով՝ ինչպէս ըրած էր իր միւս եղբայրը, Արեքսիս Վ. ը՛ որ ծանօթ է ազգային դրական շրջանակներուն Ծաղկաքաղով (դրական հաւաքածոյ) ու Աւետարաններու աշխարհաբար թարգմանութեամբ:

Հ. Թեղղոր Վ. Ուխտիս անդամակցած էր մշտնջենաւոր կապերով եւ -902ի 17 Օգոստոսին քահանայական սուրբ ձեռնադրութիւնն առած իր դասակիցներէն չորս ընկերներու հետ, եւ այնուհետեւ կը սկսէր իր շարժուն եւ դործունեայ կեանքը՝ նախ որպէս ուսուցիչ բնական դիտութիւններու վանքին աշակերտութեան, եւ յետոյ կը զրկուէր Պարտիզակ՝ վարելու համար Միաբանութեանս այդ առաքելաւորին փոքրիկ դպրոցը եւ քիչ յետոյ Ժողովրդավեճական փափուկ պաշտօնը՝ մինչեւ 1908: Յետ մասնակցելու 1909-ի միաբանական ընդհանուր Ժողովին՝ տարի մը վանքիս տպարանին մէջ կը պաշտօնավարէ եւ 1910-1912ին ալ Մուրաւ-Ռափայէլեան վարժարաններու կալուածներուն մատակարարներուն կ'օժանդակէ Փատուայի մէջ, ուսկից յետոյ Մեծաւորները զինքը կրկին Արեւելք կը զրկեն, այս անգամ դէպի Կ. Պոլիս, եւ հոն 1912-1919 տարիներուն կը նուիրուի ուսուցչական եւ մատակարարական պաշտօններու տեղւոյն մեր հաստատութիւններուն մէջ եւ մեծ կ'ըլլայ իր արդիւնքը 1914-1918 մեծ պատերազմի ընթացքին. միեւնոյն ժամանակ իր սիրալոթար մասնակցութիւնը կը բերէ օժանդակելով մեր կղերին խոստովանահայրութեան պաշտօնով, ցոյց տալով իր առաքելական հոգին եւ եռանդը հաւատացեալներուն հանդէպ իր հայրենակից եւ ազգական

բուհ հոգեւոր կարօտութեան հանդէպ:

Զինադադարէն քիչ վերջ կը կանչուի Ս. Ղազար ուր իր հոգածութեան կը յանձնուի Վենետիկ քաղաքին մէջ Ս. Խաչ եկեղեցւոյ մատրանապետի պաշտօնը եւ միանգամայն խնամակալութիւնը Մուրատ-Ռափայէլեան վարժարանի համալսարանական ուսանողներուն:

Իր կեանքի վերջին երեսնամեակը (1921 - 1951) ամբողջապէս նուիրեց Վենետիկի լճակին մէջ ցիրուցան վանքիս հոգեւորն մատակարարութեամբ եւ անոր մէջ ցոյց տուաւ իր փորձառու եւ խոհական ճիւղերը, ինչպէս նաեւ ձեռնարկեցութիւնը բարեփոխելու, զարգացնելու եւ ամենադժուարին ժամանակներու մէջ - պատերազմի, ընկերական ու դասակարգային շարժումներու ընթացքին - զիտցաւ հսկել, քաջալերել, օգնել, վարձատրել եւ իմաստութեամբ վարել ու ի հարկին խաղաղել աշխատաւորն ու զիւղացին:

Շնորհիւ այդ յարատեւ ջանքերուն եւ իմաստութեան՝ ընդարձակեց հոգերը, աճեցուց արդիւնաբերութիւնը եւ տեղական իշխանութիւններուն առջեւ ալ նախանձելի դարձուց զանոնք եւ օրինակ չըջակայ հողատէրներուն: Եւ իր փորձառութեան եւ հմտութեան համար էր որ հանդուցեալը միշտ փնտռուած էր որպէս քաջ խորհրդական եւ անպակաս կը հրաւիրուէր կարեւոր հաւաքոյթներուն որ տեղի կ'ունենային դաւառական իշխանութեանց մասնագէտներուն մասնակցութեամբ:

Եւ ողբացեալ Հ. Թէոփոր Վ. դարձաւ նախախնամութեան մարդը որ իր մատակարարած հոգերուն յարաճուն արդիւնաբերութեամբ Միաբանութեան կարեւոր պէտքերը հոգայ. այնպէս որ, մինչ վերջին պատերազմին ու յաջորդող դժուարին կացութեան ընթացքին քաղաքն ու գաւառը աւելի կամ նուազ չափով նեղ ու տագնա-

պալից օրեր անցուցին տնտեսապէս, Ս. Ղազար հարկաւորէն ալ աւելի բան մը ունեցաւ՝ անխռով շարունակելով իր դոյրութիւնը, զործելու համար միշտ ազդին հոգեկան, բարոյական եւ մտաւոր բարեփոխումը:

Հանդուցեալը իր կեանքի վերջին տարին նուիրուեցաւ պատմական ու կարեւոր դործի մը, այսինքն մեր կղզիին կրկնապատկուած հոգերը պարսպելու: Դժուարին եւ մեծածախս աշխատութիւն՝ զոր առաջ տարաւ նա անխնայ եւ եռանդուն եւ մօտ էր զայն աւարտելու՝ երբ յեղակարծ մահը զրկեց զինքը այդ միջոցառութենէն:

Իր թաղումը յաղթանակի օր մ'էր կարծես իրեն համար: Իր մատակարարած հոգերու բազմաթիւ ընտանիքներէն, մեր բարեկամներէն ու ազգայիններէն մինչեւ քաղաքական իշխանութեանց բազմաթիւ ներկայացուցիչներ փութացել էին Միաբանութեանս սղաւոր Հայրերուն հետ սիրոյ եւ յարգանքի յետին տրիտուրն ընծայելու անոր:

Եւ մինչ մամուլին կ'աւանդենք այս տղերը անոր յիշատակին անմահութեան՝ Միաբանութեանս երախտագիտութեան անթաւաճ պսակը կը զետեղենք անոր դամբանին վրայ՝ որպէս հաւատարմի զինուորի, որ զիտցաւ իր լաւագոյն կարողութիւններն ու ջանքերը իր անձին բովանդակ զոհաբերութեամբ նուիրել իր սիրած Ուխտին բարօրութեան համար, որուն փոխարէն Գերագոյն վարձահատոյցը պիտի շնորհէ իրեն յաւերժական ուրախութիւնը արդարեւոր հայրենիքին մէջ, ինչ որ մեր լաւագոյն իղձն է եւ մաղթանքը:

Հ. Ե. Փ.

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ

ԱԹԱՆԱՍԵԱՆ ԽԱԶԻԿ ՎՐԴ. - Հեթանոսի որդի. թատերախաղ չորս արարուածով. թարգման. Փրանսերէնէ: Պէյրութ, Հայ Կաթիլ. տպ. 1950, էջ 85. (Երկու օրինակ):

ԱՂԱՃԱՆԵԱՆ ԳՐԻԳՈՐ - ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԿԱԹՂ. - Թուղթ Հովուական. Պէյրութ, Հայ Կաթիլ. տպ. 1951, էջ 8:

ԱԼՊՅԱՃԵԱՆ ԱՐՇԱԿ. - Պատմական Հայաստանի սահմանները. Հրատ. Հայ Ազգ. Հիմնադրամի, Թիւ 12: Գահիրէ, տպ. Նոր-Աստղ, 1950, էջ 9 + 479, մեծադիր:

ԱՐՄԻԿ. - Կերթամ (վէպ). Թեհրան, տպ. Ալիք, 1950, էջ 76:

ԴԱՐԻՔ ՏԸ ԼԱ ԹՈՒՇԻ ՄԱՅՐ ԼՈՒԻՉ-ՄԱՐԳԱՐԻՏ. - Անհուն սիրոյն զիրքը. (քնարէն թարգմանում): Պէյրութ, Հայ Կաթիլ. տպ. 1950, էջ 189. (Երկու օրինակ):

ԶԱՆԳՈՒ Ս. Բ. - Մինչեւ լուսարաց (բանաստեղծութիւններ). Մատենաշար «Դէպի Լոյս» Թիւ 4: Իսթանպուլ, 1951, էջ 48:

ԹԵՔԵԱՆ ՎԱՀԱՆ. - Ամբողջական երկեր. Հտ. 5, 8, 9: Հրատ. «Թէքէեան Գիտնական-Բնական» Գահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, Նուպար, Նոր Աստղ. 1950:

ԹԵՔԵԱՆ ՎԱՀԱՆ. - Վահան Թէքէեանի նամակները Լեւոն Զաւէն Սիւրբէկեանին: Հրատ. «Նոր Գիրք» Նիւ Եորք, 1950, էջ 82:

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Եւ արուեստի: Մատենաշար «Շարժում» Թիւ 2: Պէյրութ, 1951, էջ 106:

ՄԿՈՒՆԴ ՏԻԳՐԱՆ. - Ամբողջ արձագանգներ: Նիւ-Եորք, 1950, տպ. «Հայ-Կիւլ», էջ 581 (մեծադիր):

ՍԱՍՈՒՆԻ Կ. - Պատմութիւն արեւմտահայ արդի գրականութեան: Հրատ. «Համազգային» ընկերութեան. Պէյրութ, 1951, էջ 373:

ՍԱՐԱՅԵԱՆ ԳԵՈՐԳ Ա. - Էջեր եւ նիւթեր մանկավարժութեան: Հրատ. Կիւլիկիոյ Կաթողիկոսութեան. Անթիլիաս, 1950: Հտ. Ա. էջ 448, Հտ. Բ. էջ 363:

ՍԱՐԱՅԵԱՆ ԳՐԻԳՈՐ Ա. - Վարդանանց պատերազմը եւ վարդան Մամիկոնեան. (Հայերէն եւ անգլիերէն): Ֆրէզնոյ, Գալիֆ. տպ. «Նոր Օր» 1951, Բ. տպագր., էջ 62. (Երկու օրինակ):

ՍԻՐՄԵԼԵԱՆ ԼԵՒՈՆ ԶԱԻՆ. - Լոյս գուրթի Բ. տպագրութիւն: (Տպուած Վահան Թէքէեանի նամակներուն հետ): Հրատ. «Նոր Գիրք» Նիւ Եորք, 1950, էջ 83-117:

ՎԱՐԱՆԴԵԱՆ ՄԻԳԱՅԷԼ. - Հ. Յ. Դանիկցութեան պատմութիւն. Բ. Հատոր: Գահիրէ, տպ. «Յուսարեք», 1950, էջ 132 + 24 նկարներ:

ՏԵՐՏԵՐԵԱՆ ԵՂԻՇԷ ՎՐԴ. - Ակամայ անդրադարձութիւն Տ. Գրիգոր-Պետրոս ԺԵ. Ազատ-

նեան Կարախանին հովուական թուղթերուն առիթով: Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1950, էջ 42:

ՖԵՐԶԱԹԵԱՆ Հ. ԲԱՐՍԵՂ. - Երկնքի սասկաւոր: Հետաքրքրաշարժ բայց հաւատարմ կեանքը Ս. Յովհաննէս Բոսկոյի. հետեւողութեամբ՝ Պետրոս Կրայի: Պէյրութ, Հայ Կաթիլ. տպ. 1949, էջ 209: (Հրատ. «Մասիս» շաբաթաթերթի, Թ. 3):

Totomian: Vahan. - La Cooperazione (prefazione e note di Alberto Basevi. - Collana di Studi Cooperativi N.º 6). Roma, ed. de «La Rivista della Cooperazione» 1950, pg. 194.

Miniature del Rinascimento. - Catalogo della mostra con 2 riproduzioni a colori e 31 in nero, in occasione del Quinto Centenario della Biblioteca Vaticana. Città del Vaticano, 1950, pg. 90 + XXXI.

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ, Միւթար Տօնադիրք. Երնւ. Միւ. Արբաճօր մահուան 200-ամեակը տարեգրքի առիթով 1749-1949: (Հանդ. Ամս. 1949, Թ. 4-12, էջ 434, մեծադիր): Հրատ. 1950, Միւթ. տպ. Վիեննա:

ՀԱՍԿ, Հայադիտական Տարեգիրք, Բ. Տարի (1949 - 1950). նուիրուած Հայրապետական Մայր Աթոռի էջմիածին փոխադրութեան 500-ամեակին (1441-1941): Հրատարակութիւն Կիւլիկիոյ Կաթողիկոսութեան. Անթիլիաս, 1950, էջ 353:

ՆՈՅՆԵԱՆ ԱՂԱԽԻՆ - Հայ Մարդն ու իր մշակոյթը: Պարբերագիրք, Ա. տարի, Թիւ 1: Հրատարակիչ՝ Արշամ Տատեան: Գահիրէ, տպ. «Նուպար», 1950, էջ 80. (Երկու օրինակ):

ՊԱՅԳԱՐ, Նոր Տարւոյ Բացատրիկ, 1951: Պոսթըն, էջ 225:

ԵՐԱՆԻԿ ՏԱՐԵԳԻՐՔ, Կազմեց՝ Բազարատ Թեւեան. 5 Թիւ, 1947-1951, Իսթանպուլ:

ԱՍՏՂԱՔԵՐԴ, մշակութային ամսօրեայ հանդէս. Ա. Տարի, Թիւ 1, Ապրիլ 1951. Կազմեց՝ Թորոս Ազատեան, Իսթանպուլ:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ, Հայկական օրաթերթ, Ա. տարի, 1951:

ՕՐԱՅՈՅՑ 1951 թուականին Բրիտանի (բոս հին տոմարի). Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, էջ 204:

ՕՐԱՅՈՅՑ 1951 (պատի). Հրատ. Առաջնորդարան Կաթ. Հայոց, Աթէնք. (Երկու օրինակ):

ՕՐԱՅՈՅՑ 1951 (պատի). Հրատ. «Հ. Կ. Ե. Մ.» ի Հայ Կաթիլ. տպարան, Պէյրութ:

ՕՐԱՅՈՅՑ «ԳՈՅԱՄԱՐՏ» 1951 (պատի). Հրատ. Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Մարտիկ:

ՕՐԱՅՈՅՑ «ԵՐՈՍ» 1951 (պատի). Կազմեց եւ հրատ. Ն. Ստեփանեան. Թեհրան:

ՕՐԱՅՈՅՑ «ՆԱԽԱՍԱՐԴ» 1951 (պատի). տպ. «Յուսարեք» Գահիրէ:

